



# ԱՌԱՋՆՈՐԴԱՐԱՆ ՀԱՅՈՑ

Ա.Ս. ՆԱՀԱՆԳՆԵՐՈՒ ԱՐԵՄՏԵԱՆ ԹԵՄԻ

## WESTERN PRELACY

OF THE ARMENIAN APOSTOLIC CHURCH OF AMERICA

H.E. ARCHBISHOP MOUSHEGH MARDIROSSIAN, PRELATE

Tel: 818-248-7737/8, Fax: 818-248-7745

E-mail: [info@westernprelacy.org](mailto:info@westernprelacy.org) Website: [www.westernprelacy.org](http://www.westernprelacy.org)



### ԱՌԱՋՆՈՐԴ ՄՐԲԱԶԱՆ ՀՅՐ ԱՄԱՆՈՐԻ ԵՒ Ս. ԾՆՆԴԵԱՆ ՊԱՏԳԱՄԸ

#### Ս. ԾՆՆԴԵԱՆ ՏՕՆԸ՝ ՇՆՈՐՀԱԿԱԼՈՒԹԵԱՆ ԵՒ ԵՐԱԽՏԱԳԻՏՈՒԹԵԱՆ ՀՐԱՒԵՐ

Ահա դարձեալ կը գտնուինք նոր տարուան մը սեմին եւ կը պատրաստուինք տօնելու մեր Տիրոջ եւ Փրկչին՝ Յիսուս Զրիստոսի Ս. Ծննդեան ու Աստուածայայտնութեան տօնը:

Այս տօնական օրերու վայելքը ապրելու աւելի լաւ ձեւ չկայ, քան պահ մը կանգ առնելը եւ խորհրդածելը ամենակալ Աստուծոյ մեզի պարգեւած շնորհներուն, եւ միաժամանակ մեր երախտագիտութիւնը յայտնելու եւ մտածելու «**Մեծ եւ Սքանչելի Խորհուրդ**»ին՝ մեր Փրկչին Ս. Ծննդեան պարագաներուն մասին:

Դժբախտաբար, սակայն, տակաւ առ տակաւ, Ս. Ծննդեան տօնին ճշմարիտ ու գեղեցիկ իմաստը կը տօգուին: Չարդարուն ծառերը, գոյնզգոյն լոյսերը, գեղեցիկ զարդարանքներն ու ճոխ նուէրները չեն արտայայտեր Ս. Ծննդեան տօնին իմաստը, մինչդեռ անիկա Աստուծոյ բարութիւնը յիշելու, սիրելու, ընծայաբերելու եւ ներելու շրջան մըն է:

Դարեր առաջ, Բեթղեհեմի համեստ մտւրին մէջ մեզի համար մանուկ մը ծնաւ, որ Աստուծոյ ու մարդուն միջեւ յարաբերութիւնները վերահաստատեց, եւ մեզի պարգեւեց նոր կեանք մը: «**Եւ բանը մարդ եղաւ եւ մեր միջեւ բնակեցաւ, եւ մենք տեսանք անոր փառքը. փառքը միածինին, որ Հօրմէն եկաւ՝ շնորհքով եւ ճշմարտութեամբ լեցուն**» (Յովհ. 1:14): Յիսուսի ծնունդով Աստուած մեր մէջ բնակեցաւ մեզ փնտռելու եւ փրկելու համար, եւ մարդկութիւնը արդարութեան ճանապարհին առաջնորդելու:

Ս. Ծննդեան այս տօնին, եւ ամէն ժամանակ, եկէ՛ք, մեր երախտագիտութիւնն ու շնորհակալութիւնը յայտնենք մեր Փրկչին Ս. Ծննդեան ճշմարիտ պատգամին համար, զԱստուած փառաբանենք, երկրի վրայ խաղաղութիւն բերենք եւ մարդոց միջեւ սեր ու հաճութիւն սերմանենք:

Ս. Ծնունդն ու Աստուածայայտնութիւնը, ամէն բանէ առաջ ու վեր, մարդուն հանդէպ Աստուծոյ սիրոյն արտայայտութիւնն է: «**Որովհետեւ Աստուած այնքան սիրեց աշխարհը, որ մինչեւ իսկ իր միածին որդին տուաւ, որպէսզի անոր հաւատացողը չկորսուի, այլ յաւիտենական կեանք ունենայ**» (Յովհ. 3:16):

Այո՛, Աստուած այնքան սիրեց աշխարհը՝ մարդը, որուն համար մեզի տուաւ ամենէն կատարեալ պարգեւը՝ փրկութեան խոստումն ու ճշմարիտ կեանքը իր Որդւոյն՝ Յիսուս Բրիստոսի միջոցաւ:

**«Ուստի Տէրը ինք նշան մը պիտի տայ ձեզի. ահա կոյսը պիտի յղանայ ու որդի պիտի ծնանի, եւ անոր անունը Էմմանուէլ պիտի կոչէ»** (Ես. 7:14):

Յիսուս Բրիստոսի Ս. Ծննդեան մասին վկայութիւններն ու մարգարէութիւնները դարեր առաջ իբրեւ խոստում տրուած էին մարդկութեան, որոնք մանուկ Յիսուսի աշխարհ գալով իրականացան: **«Մի վախնաք, ձեզի անտիս մը պիտի տամ, որ ամբողջ ժողովուրդին մեծ ուրախութիւն պիտի պատճառէ: Այսօր, Դաւիթի քաղաքին մէջ ձեր Փրկիչը ծնաւ, որ օծեալ Տէրն է»** (Ղուկ. 2:10-11):

Աշխարհ ցնծաց Յիսուս Բրիստոսի ծնունդով, որովհետեւ Փրկիչը եկաւ սիրոյ, խաղաղութեան եւ մարդոց միջեւ հաճութեան անտիսը բերելով, եւ մանաւանդ յոյս՝ խաւարած աշխարհին:

Արդարեւ, Փրկչին ծնունդը մեզի յոյս ներշնչեց, յաւիտենական կեանքի յոյսը: Յոյս մը՝ այս երկրաւոր կեանքը ապրելու Աստուծոյ օրհնութեամբ, յոյս մը՝ որ երկնքի արքայութիւնը մտնենք իր որդւոյն եւ մեր Փրկչին՝ Յիսուս Բրիստոսի միջոցաւ:

Ի վերջոյ, եւ ամենէն կարեւորը, Աստուծոյ շնորհքով ու Ս. Ծննդեան պարգեւով ներման արժանացանք, որ մեծագոյն պատճառն է շնորհակալ ըլլալու Աստուծոյ եւ երախտագիտութեան զգացումով լեցուելու:

Ս. Ծննդեան այս տօնին, յիշենք Աստուծոյ կողմէ մարդկութեան տրուած հրաշալի շնորհքը, եւ մեր երախտագիտութեան նուէրը տանք ամբողջ սրտով ու հոգիով, մեր եութենէն ներս Տէրը ընդունելու եւ աստուածահաճոյ կեանք մը ապրելու՝ իր պատուիրաններուն հետեւելով: Օգնութեան ձեռք երկարենք մեր նմաններուն եւ հասնիք կարիքաւորներուն, ինչպէս որ մեր Փրկիչը մեզի կը հասնի: Ներող ըլլանք իրարու, ինչպէս ինք ներեց ու կը ներէ մեր մեղքերն ու յանցանքները:

Որքան յատկանշական է որ Աստուծոյ ողորմութիւնը իր արտայայտութիւնը գտաւ նորածին մանուկին կերպարանքով: Ան աշխարհ եկաւ որպէս նորածին մանուկ, որ Չինք ընդունիւնք փոքր մանուկներու հոգիով: Մեր Տէրը՝ Յիսուս Բրիստոս, իր երկրաւոր առաքելութեան ընթացքին բացառիկ սեր տածեց մանուկներուն հանդէպ, եւ բազմաթիւ առիթներով իր աշակերտներուն օրինակ բերաւ մանուկներուն առաքիլութիւնները: **«Վստահ գիտցեք, որ եթէ չփոխուիք ու մանուկներու պէս չըլլաք, երկնքի արքայութիւնը պիտի չմտնէք»** (Մատթ. 18:2-3): Ան մանուկին մէջ տեսաւ ճշմարիտ ու հարազատ պատկեր մը, որուն մարդ անհատը պետք է ձգտի, որպէսզի երկնքի արքայութիւնը մտնէ: Այսպէս, մեր Տէրը կը հրաւիրէ մեզ նմանելու մանուկներուն, անոնց անմեղութիւնը, պարզութիւնը, վստահութիւնը, մաքրութիւնը, հաւատքը, յոյսը, բարութիւնը ունենալու:

Մանուկներ կատարելապէս կը վստահին իրենց ծնողներուն, կը վստահին եւ կը հաւատան, որ ծնողները գիտեն թէ ինչ բանը լաւ է իրենց համար: Ապահով են որ անոնք պիտի չմոլորեցնեն զիրենք եւ անոր համար կը վստահին անոնց: Նոյնը ըրաւ մեր Տէրը Յիսուս Բրիստոս: Հետեւաբար, մենք ալ պետք է կատարելապէս վստահիք մեր Տիրոջ, քալենք իրեն հետ,

եւ մեր կեանքը հրեն յանձնենք, որպէսզի մեզ առաջնորդէ: Աստուած կ'ուզէ, որ բոլորս իր հարազատ զաւակները ըլլանք:

Սիրելիներ,

Ս. Աթոռոյս Գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոս 2011 տարի հռչակեց «Չայ Մանուկի Տարի»: Ի՛նչ սքանչելի առիթ բոլորիս համար ճանչնալու եւ որդեգրելու խոնարհութեան, մաքուր սիրոյ, ամբողջական վստահութեան առաքինութիւնները, որոնք կը մարմնաւորեն մանուկները: Նոյն խոնարհութիւնը, նոյն սերը, նոյն յոյսն ու հաւատքը եւ նոյն վստահութիւնը մեզի բերաւ նորածին Մանուկ Յիսուս:

Մանուկները լաւագոյն օրինակն են բոլորիս համար, թէ ինչպէս պէտք է յարաբերինք Աստուծոյ հետ: Յետեւաբար, եկէ՛ք, մանուկի հոգիով ճանչնանք եւ ընդունինք մեր Տէրը, որպէսզի արժանի ըլլանք երկնքի արքայութեան: Նորին Սուրբ Օծութեան պատգամը նաեւ կարելոր հրաւեր է բոլորիս, եւ յիշեցում մը մեր պատասխանատուութեանց ու պարտաւորութեանց:

Մեր զաւակները մեր եկեղեցւոյ ու մեր ազգին ապագան են: Անոնք մեր ապագայ առաջնորդներն են: Յետեւաբար, մեր պարտքն է զանոնք դաստիարակել աստուածգիտութեան ճանապարհով, շատ փոքր տարիքէ, որպէսզի երբ մեծնան, հաւատարիմ մասն այդ ճամբուն եւ իրենց կարգին, դառնան օրինակելի չափահասներ, ունենան լաւ նկարագիր եւ պատրաստ ըլլան ստանձնելու դրօշը:

Սիրելի հաւատացեալներ,

Վերջին քանի մը տարիները դժուարին շրջան են եղած մարդոց համար, աշխարհի տարբեր շրջաններուն մէջ: Այսուհանդերձ, ի՛նչ վիճակի մէջ ալ որ գտնուինք, թող մեզ շրջապատող պայմանները չպայմանաւորեն Ամենակալին հանդէպ մեր երախտագիտական զգացումները: Միշտ յիշենք, թէ որքա՛ն սքանչելի է Աստուծոյ սերը, չմոռնանք մեր վայելած օրինութիւնները եւ շնորհապարտ ըլլանք ո՛չ միայն Ս. Ծննդեան տօնի օրերուն, այլ մեր կեանքի իւրաքանչիւր օրուան ընթացքին: Առաւել եւս, Առաքեալին բառերով, **«Միշտ ուրախ եղէք, անդադար աղօթեցէք: Ամեն բանի համար շնորհակալ եղէք, որովհետեւ Աստուած ատիկա՛ կը սպասէ ձեզմէ, որ Յիսուս Քրիստոսի միացած էք»** (Ա. Թեսղ. 5:16):

Տօնական այս օրերուն, որդիական սիրով մեր շնորհաւորութիւնները կը յղենք Ս. Աթոռոյս գահակալ Ն.Ս.Օ.Տ.Տ. Արամ Ա. Կաթողիկոսին, աղօթելով առ Աստուած, որ Նորին Ս. Օծութեան պարգեւէ բազմաթիւ առողջ տարիներ եւ կենսունակութիւն, որպէսզի ընդերկար առաջնորդէ մեր ժողովուրդն ու եկեղեցին: Մեր բարի մաղթանքները կ'ուղղենք մեր հայրենիքի ղեկավարութեան ու ժողովուրդին, մեր հոգեւոր եղբայրներուն, Կրօնական Ժողովի ու Ազգային Վարչութեան անդամներուն, ազգային երեսփոխաններուն, հոգաբարձութեանց, Ազգ. Վարժարաններու Խնամակալ Մարմինին, Տնօրէնութեանց, դաստիարակներուն, կազմակերպութեանց, միութեանց, մամուլի սպասարկուներուն եւ մեր հաւատացեալ ժողովուրդի բոլոր զաւակներուն, խնդրելով Աստուծոյ օրինութիւնը, սերն ու գթութիւնը տարուան բոլոր օրերուն:

Այս գգացումներով եւ հոգեկան ցնծութեամբ կ'ըսենք. «Փառք ի բարձունս Աստուծոյ, եւ յերկիր խաղաղութիւն, ի մարդիկ հաճութիւն» (Ղուկաս 2:14):

Շնորհաւոր Նոր Տարի,  
Քրիստոս Ծնաւ եւ Յայտնեցաւ,  
Ձեզի Մեզի Մեծ Աւետիս:

Աղօթարար՝

Սուշեղ Արք. Մարտիրոսեան, Առաջնորդ  
Ա. Մ. Նահանգներու Արեւմտեան Թեմի

Ամանոր եւ Ս. Ծնունդ, 2011

### **PRELATE'S NEW YEAR AND CHRISTMAS MESSAGE**

#### **CHRISTMAS: A TIME FOR GRATITUDE AND THANKS**

Once again we find ourselves at the threshold of a new year and preparing to celebrate the Glorious Birth and Theophany of our Lord Jesus Christ. What better way to begin the season than to take a moment and contemplate with gratitude all that Almighty God has granted us, and reflect on the truly profound meaning of the “**Great and Marvelous Mystery**”, the Birth of our Savior.

Sadly, it seems at times that the true and beautiful meaning of Christmas has been lost. It is not trees, lights, decorations, and gifts; it is a time of remembering, loving, giving, and forgiving. In that humble manger in Bethlehem centuries ago, a child was born unto us, a child Who restored the relationship between God and man and gave us new life. “***And the Word became flesh and dwelt among us, and we beheld His glory, the glory as of the only begotten of the Father, full of grace and truth***” (John 1:14). When Jesus was born, God became man and dwelt among us to seek and save us, to set us free, and to lead mankind back to the path of righteousness.

During this season and always, let us give gratitude and thanks for the real message of Jesus Christ's Birth, let us glorify God for His indescribable gift, and strive to foster the Christmas message of peace, love, and harmony.

The Birth of our Savior is first and foremost the ultimate expression of God's love for us. “***For God so loved the world that He gave His only begotten Son, that whoever believes in Him should not perish but have everlasting life***”

*(John 3:16).* God loved the world so much that He gave us the perfect gift; He gave us salvation and life through His Son Jesus Christ.

***"Therefore the Lord Himself will give you a sign: Behold, the virgin shall conceive and bear a Son, and shall call His name Immanuel" (Isaiah 7:14).*** With the Birth of Christ, the prophecies and promises of the Old Testament were fulfilled, giving us everlasting hope for eternal life. We are granted hope for a life on earth filled with the Lord's abundant blessings, and hope of entering the heavenly kingdom of our Lord through His Son, Jesus Christ.

***"Do not be afraid, for behold, I bring you good tidings of great joy which will be to all people. For there is born to you this day in the city of David a Savior, who is Christ the Lord" (Luke 2:10-11).*** The world rejoiced at the Birth of Jesus Christ for the Savior had come, bringing great tidings of love, peace, and goodwill to mankind, and light to a darkened world. The love and grace of God shown to the world in the Birth of Jesus Christ brought great joy to the world, not temporary but rather everlasting joy that continues to resonate in our lives today.

Finally, and most importantly, by the grace of God and through the Birth of Baby Jesus, we have been pardoned, and that is more than enough reason to be thankful and have an attitude of gratitude.

With these thoughts in mind, let us reflect on the truly marvelous gift bestowed to mankind by our Lord and give our gift of gratitude by welcoming Him in our hearts and living God-pleasing lives. Let us reach out to others and give of ourselves to the less fortunate as He reaches out to us. And let us forgive one another as He forgave and forgives us.

It is interesting and significant that God's mercy appeared in the form of a child rather than appearing in power and majesty. He came as a baby and reminds us to receive Him as little children. During His earthly ministry, Jesus showed extraordinary love for children and on many occasions extolled the virtues of children to His apostles. ***"Assuredly, I say to you, unless you are converted and become as little children, you will by no means enter the kingdom of heaven" (Matthew 18:3).*** He saw something in children that adults must strive for in order to enter the kingdom of heaven, and thus He invites us to become like little children; to emulate the innocence, simplicity, trust, purity, dependence, faith, and goodness of little children.

Children wholly trust their parents; they trust that their parents know what is good for them, that they will not lead them astray, and thus they hold their hands and follow their lead. As a child does with a parent, we must put our complete trust in our Savior, walk with Him, and let ourselves be guided by Him. The Lord wants us all to become His children, and for that we rejoice.

Dear beloved,

His Holiness Catholicos Aram I has proclaimed 2011 as the “Year of the Armenian Child”. What a wonderful opportunity for us to recognize and adopt the virtues of humility, pure love, and pure trust that children embody. Children are great examples of how we are to be with God, therefore let us learn from them and become childlike in our worship of our Lord so that we might inherit eternal life and enter the kingdom of heaven. This proclamation by His Holiness is also an important call and a reminder of our responsibilities and obligations to our youth. Our children are the future of our church and our nation; they are our future leaders. As such, we must spare no effort in ensuring that they receive proper education and instruction at an early age so that they develop into good adults with good character and are ready and able to take the helms.

Dear faithful,

The past few years have been difficult ones for most people in all parts of the world. However, no matter what situation we may find ourselves in, let our circumstances not dictate our feelings of gratitude for our Lord Almighty. May we always be mindful of just how wondrous God’s love is, count our blessings, and give thanks not only during Christmastime or in times of good, but each and every day of our lives. May we ***“rejoice always, pray without ceasing, and in everything give thanks; for this is the will of God in Christ Jesus for you” (1 Thessalonians 5:16).***

On this blessed occasion, with filial love we extend our felicitations to our Pontiff His Holiness Catholicos Aram I, praying for the Lord to grant him many years of good health and prosperity as he guides our church and people. We convey our well wishes to the leadership and brethren of our homeland, our Clergy, Religious and Executive Councils, Delegates, Boards of Trustees, Board of Regents, Principals, educators, organizations, and our faithful parishioners, praying for the Lord’s blessings, love, and mercy to be upon us all throughout the new year.

With these sentiments, we joyously proclaim ***“Glory to God in the highest, and on earth peace, goodwill toward men!” (Luke 2:14).***

***Happy New Year  
Christ is Born and Revealed  
Blessed is the Revelation of Christ***

Prayerfully,

Archbishop Moushegh Mardirossian  
Prelate, Western United States

New Year & Theophany 2011